ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ԿՈՏԱՅՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

Հաստատում եմ՝ _____ Ա. Երեմյան
Կոտայքի տարածաշրջանային
պետական քոլեջի կառավարման
խորհրդի նախագահ
12 սեպտեմբերի 2025 թվական

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՔՈԼԵՋԻ ՄԱՆԿԱՎԱՐԺ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

ՀՐԱԶԴԱՆ 2025

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Սույն կարգը սահմանում է Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջում դասավանդող մանկավարժ աշխատողների (դասախոսների, արտադրական ուսուցման վարպետների) աշխատանքային գործունեության վարկանիշային գնահատման նպատակները, սկզբունքները, գործընթացը և գնահատման առանցքային ցուցիչները:

1.2 Վարկանիշային գնահատումը նպատակ ունի՝

- Բարձրացնել կրթության որակը,
- Զարգացնել մանկավարժ աշխատողների մասնագիտական կարողությունները,
- Ապահովել աշխատանքի արդյունավետության գնահատման թափանցիկ և համապարփակ մեխանիզմ,
- Ստեղծել խթանման, խրախուսման և կարիերայի առաջխաղացման հնարավորություն:

1.3 Գնահատումն անցկացվում է տարեկան մեկ անգամ՝ ուսումնական տարվա ավարտին:

2. Գնահատման կազմակերպում

2.1 Վարկանիշային գնահատումն իրականացվում է քոլեջի տնօրենի հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից, որի կազմում կարող են լինել՝

- Ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենը,
- Մասնագիտական բաժնի ղեկավարը,
- Ամբիոնի վարիչը,

- Ուսանողական խորհրդի ներկայացուցիչ (ոչ պարտադիր, խորհրդատվական իրավունքով):

2.2 Վարկանիշային գնահատման արդյունքները հաստատվում են քոլեջի տնօրենի կողմից և ընդգրկվում են աշխատակցի անհատական գործի մեջ:

3. Գնահատման առանցքային ցուցիչներ

Վարկանիշը հաշվարկվում է 100 միավոր համակարգով՝ ըստ հետևյալ ցուցիչների.

Ցուցիչ	Նկարագրություն	Մաքսիմում միավոր
1. Ուսումնական գործունեություն	Դասաժամերի որակյալ իրականացում, ուսումնական կարգապահություն, դասապրոցեսի կազմակերպման արդյունավետություն	20
2. Մեթոդական աշխատանք	Ուսումնական ծրագրերի, մեթոդական ձեռնարկների և կրթական նյութերի մշակում, նոր մեթոդների կիրառում	12
3. Մասնագիտական զարգացում	Մասնակցություն վերապատրաստումների, սեմինարների, մասնագիտական հանդիպումների, գիտաժողովների	8
4. Ուսանողների հետ աշխատանք	Անհատական մոտեցում, ուսումնական առաջընթացի խթանում, դասից դուրս խորհրդատվություն,ուսանողների նկատմամբ մանկավարժահոգեբանական մոտեցում	10
5. Մենթորություն	Նոր դասախոսների խորհրդատվություն,	7

Ցուցիչ	Նկարագրություն	Մաքսիմում միավոր
սկսնակ դասավանդողներին	մասնագիտական ուղեկցում, դասերի դիտարկում, մեթոդական աջակցություն	
6. Ուսանողական գնահատականներ	Ուսանողների կողմից դասախոսական աշխատանքի որակի գնահատում՝ անանուն հարցումների միջոցով	8
7. Հետազոտական և գիտական գործունեություն	Հետազոտությունների իրականացում, մասնագիտական հոդվածների հրապարակում, գիտաժողովներին մասնակցություն	8
8. Կրթական արդյունքներ	Ուսանողների առաջադիմության միջին ցուցանիշներ, ավարտողների տոկոս, մասնագիտական առաջընթաց	7
9. Համայնքային և հանրային ներգրավվածություն	Մասնակցություն հանրային միջոցառումներին, կրթական կամ կամավորական ծրագրերին	5
10. Կազմակերպական մասնակցություն	Ներգրավվածություն քոլեջի ներքին կյանքին՝ խորհուրդներ, հանձնաժողովներ, միջոցառումներ	5
Ընդամենը		100 միավոր

4. Գնահատման մակարդակներ

Միավորների միջակայք	Վարկանիշային գնահատական

Միավորների միջակայք	Վարկանիշային գնահատական
91 – 100	Բարձր
76 – 90	Լավ
61 – 75	Բավարար
0 – 60	Թերի (անբավարար)

5. Վերահսկողություն և կիրառություն

5.1 Վարկանիշային գնահատման արդյունքները կարող են օգտագործվել՝

- Մասնագիտական առաջխաղացման որոշման ժամանակ,
- Տարվա լավագույն դասախոսի կոչում շնորհելիս,
- Վերապատրաստման ուղարկելու կամ խրախուսման որոշում կայացնելիս,

5.2 Դասախոսը կարող է ծանոթանալ իր գնահատման արդյունքներին գրավոր եղանակով: Անհամաձայնության դեպքում նա կարող է ներկայացնել գրավոր առարկություն՝ մեկշաբաթյա ժամկետում: Գրավոր առարկությունն ուսումնասիրում է վարկանիշավորման հանձնաժողովում չընդգրկված, մինչև 5 հոգուց բաղկացած աշխատանքային խումբը, որտեղ պարտադիր ընդգրկվում է տնօրենը, կադրերի տեսուչը, որակի պատասխանատուն և անհրաժեշտության դեպքում այլ անդամներ:

ՏՆՕՐԵՆ՝ Ք. ՀԱԿՈԲՅԱՆ